

Ռոբերտ Այվազյան

Գեղանկարիչ

Մոնումենտալիստ

ՌՈԲԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆ

5 մարտի 1945 թ.

Գեղանկարիչ - մոնումենտալիստ

Գեղանկարչություն, մոնումենտալ արվեստ՝ բարձրաքանդակ, խճանկար, դասական վիտրաժ, բեմական նկարչություն:

Կրթություն

1959-1964 թթ. – Թեոդեմեզյանի անվան Գեղարվեստի ուսումնարան, Երևան:

1964-1969 թթ. – Երևանի գեղարվեստա-թաթերական ինստիտուտ, գեղանկարիչ:

Աշխատանքային գործունեություն

2019-2022 թթ. Կերպարվեստի դասախոս Աբովյան քաղաքի Արվեստների քոլեջում:

1970-1982 թթ. Էջմիածնի Մանկական գեղարվեստի դպրոցի հիմնադիր տնօրեն:

1972 թ-ից ՀՀ Նկարիչների միության անդամ: Նույն թվականից մասնակցել է Հայաստանի և ԽՍՀՄ նկարիչների միությունների ցուցահանդեսներին:

1977-1981 թթ. Դասավանդել է Երևանի գեղարվեստի ինստիտուտի գծանկարի ամբիոնում:

1968 թ-ից մասնակցել է Հայաստանի հանրապետական ցուցահանդեսներին:

1974 թ-ից առ այսօր մասնակցել է բազմաթիվ միջազգային գեղանկարչական ցուցահանդեսների, մասնավորապես Գերմանիայում, Կանադայում, Ավստրիայում, Ռուսաստանում, Մալազիայում, Հնդկաստանում, Նորվեգիայում, Եգիպտեսում, Ֆրանսիայում և այլն:

Էջմիածնի մանկական գեղարվեստի դպրոցի հիմնադրում

1970 թ-ին Ռ. Այվազյանին ՀԽՍՀ մշակույթի նախարարության հրամանով հանձնարարվեց Էջմիածնում հիմնադրել մանկական գեղարվեստի դպրոց: Էջմիածնի քաղաքապետի հետ բազմաթիվ բանակցություններից հետո հաջողվեց ստանալ դպրոցի համար հնրավարորինս լավագույն տարածքը: Վերակառուցման և վերանորոգման աշխատանքները տևեցին վեց ամիս:

Այդ ընթացքում, կերպարվեստի և գծանկարի ուսուցման նպատակով, կրթության նախարարության ֆինանսական աջակցությամբ և Ռոբերտ Այվազյանի ջանքերով Լենինգրադի Գեղարվեստի Ակադեմիայում պատրաստվեցին անթիկ և վերածնունդի ժամանակաշրջանների լավագույն գործերի գիպսե պատճեներ: Դպրոցի ուսումնական կարիքների համար ձեռք բերվեցին անհրաժեշտ պարագաներ, գրաֆիկայի և քանդակի հաստոցներ:

Դպրոցը սկսեց գործել 1971 թ-ի սեպտեմբերից, 120 աշակերտով: 1975 թ-ին Խորհրդային միության ԱՊՆ լրատվական գործակալությունն ամբողջ աշխարհով տարածվող Խորհրդային միություն ամսագրում ընդարձակ հոդված հրապարակեց դպրոցի մասին: Դրանից հետո սկսվեցին բազմաթիվ պատվիրակությունների այցելություններ Էջմիածնի գեղարվեստի դպրոց՝ Չեխիայից,

Ֆեդերատիվ Գերմանիայից: Երևանի մանկական պատկերասրահում կազմակերպվեց Էջմիածնի գեղարվեստի դպրոցի սաների աշխատանքների հատուկ ցուցահանդես նվիրված Իտալիային: Իտալացի կինոդերասան Ջան Վալոնտեի և կինոռեժիսոր Նանիչ Լոյի գլխավորած պատվիրակությունը խանդավառությամբ այցելեց ցուցահանդեսը:

Երեխաների աշխատանքները ցուցադրվեցին Ռուսաստանում, Լիտվայում, Անգոլայում և Ճապոնիայում մանկական գեղարվեստի համաշխարհային ցուցահանդեսներին, որտեղ գրավեցին ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ և պատվոգրեր: Դրան հետևեց Ճապոնիայի 13 նահանգների դպրոցների և Ճապոնիայի Էսթետիկայի կենտրոնի գլխավոր տնօրեն Սան Տադոյի ղեկավարած պատվիրակության այցը, որոնց համար հատուկ ցուցահանդես էր կազմակերպվել Էջմիածնում: Նշված տարիներին դպրոցում ուսանել և ավարտել են 1200 աշակերտ:

Մրցանակներ

1975 թ. "Հրաժեշտ" կոմպոզիցիոն գեղանկարչական աշխատանքի համար ստացել է "Դիպլոմ" տարվա լավագույն աշխատանքի համար, տրված Կոմերիտմիության կենտկոմի և Հայաստանի նկարիչների միության վարչության կողմից:

1976 թ. Ստացել է Հայկական ԽՍՀ մշակույթի նախարարության, մշակույթի աշխատողների հանրապետական արհմիության կողմից տրված "Պատվոգիր":

2003 թ. Ստացել է "Վահագնի" մշակութային առաջին մրցանակը Հայաստանի Զարգացման Բանկի համար կատարված "Զարգացում" դասական վիտրաժների համար:

Մասնագիտական գործունեության ընտրանի

1971թ. Արամ Խաչատրյանի "Գայանե" բալետի բերադրող նկարիչ, ՀՀ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոն, Երևան, Հայաստան:

1972 թ. Արամ Խաչատրյանի "Գայանե" բալետի բերադրող նկարիչ, Վորոնեժի Օպերայի և բալետի թատրոն, Վորոնեժ, ՌԴ:

1973 թ. "Երաժշտություն" խճանկարային կոմպոզիցիայի և "Ռիթմ"դեկորատիվ բարձրաքանդակի հեղինակում, Երևանի Ճենապակու գործարան:

1986-1988 թթ. "Գիր և Գիրք" մոնումենտալ կոմպոզիցիա, բարձրաքանդակ խճանկարով (13մ x 8մ), Երևանի գունավոր տպագրության ձեռնարկության մասնաշենք, Երևան: Այս մոնումենտալ ստեղծագործությունն իր տեղն է գտել Հայկական Դյուցազնագրքում:

1989 թ-ից ի վեր, առաջիներից մեկը Հայաստանում, հեղինակել է բազմաթիվ վիտրաժային կոմպոզիցիաներ դասական տեխնիկայով՝ խթանելով այդ արվեստի զարգացումը մեր երկրում:

1989-1990 թթ. Ստեղծել է 12 մոնումենտալ դասական վիտրաժների շարք Ուկրաինայի նորակառույց Սլավուտիչ քաղաքի հայկական թաղամասի մանկապարտեզի համար, որոնցից չորսը՝ Տարվա եղանակներ թեմայով, որոշ փոխությամբ կատարվել է նաև Երևանի մանկական երկաթգծի այգու համար:

1997-1998 թթ. Հին օրինակների հիման վրա վերականգնել է Երևանի Երկնագույն Մզկիթի պատուհանների վիտրաժները Շեբեքե տեխնիկայով՝ ապակի, փայտ:

1998 թ. Սերգեյ Պրոկոֆյեվի "Մոխրոտիկը" բալետի բերադրող նկարիչ, ՀՀ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոն, Երևան, Հայաստան, բեմադրող՝ Մաքսիմ Մարտիրոսյան:

1998 թ. Հայ նկարիչների խմբակային ցուցահանդես Մոսկվայի նկարչի կենտրոնական տան ցուցասրահում, Մոսկվա:

2000 թ. Անհատական ցուցահանդես Փարիզի Սիտե դեզ Առթ (Cite des Arts) արվեստների կենտրոնում, Ֆրանսիա:

2002 թ. Չորս հայ նկարիչների խմբակային ցուցահանդես Թեհրանի "Ազադի" մշակութային կենտրոնում, Թեհրան, Իրան:

2003 թ. Մասնակցություն Կահիրեի միջազգային բիենալեին 6 գեղանկարչական աշխատանքներով:

2013 - Միջազգային ցուցահանդես Լիոնում, Ֆրանսիա:

2015 թ. Փարիզի համալսրանական քաղաքի հայ ուսանողների տանը իրականացրել է Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված վիտրաժային կոմպոզիցիա:

Գեղանկարչական աշխատանքներից կարելի է նշել՝

"Ժաներթ" դիմանկար 1966 թ.

"Անահիտը" 1967 թ.

"Հրաժեշտ" կոմպոզիցիա 1975 թ.

" Նոեմի" դիմանկար 1976 թ.

"Էլվիրա Աղաբաբյան" դիմանկար 1977 թ.

"Անահիտի դիմանկարը" 1985 թ.

"Գարուն" բնանկար 2004 թ.

"Տաթևիկ Եսայան" դիմանկար 2008 թ.

"Ցավ և սփոփանք" կոմպոզիցիա 2010 թ.

Ռ. Այվազյանի հեղինակած աշխատանքները գտնվում են Հայաստանի, Ուկրաինայի և Ռուսաստանի մի շարք թանգարաններում, տարբեր երկրներում գտնվող մասնավոր հավաքածուներում: